ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 23 » հունվար 2024թ. No 340 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ «ԻՆԴ-ՍՎԻՖԹ ԼԻՄԻՏԵԴ, ՊԼՈՏ NO11, ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ԿԱԹԱ-ԲԱԹՈԼԻԿԱԼԱՆ, ԲԱԴԻ, ՍՈԼԱՆ-ՇՐՋԱՆ, Հ.Պ. 173205» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԻՆԴ-ՍՎԻՖԹ ԼԻՄԻՏԵԴ, ՕՖՖ. ՆՀ-21, ՋԱՎԱՀԱՐՊՈՒՐ ԳՅՈՒՂ, ՏԵՀՍԻԼ ԴԵՐԱԲԱՍԻ, ՍԱՍ ՆԱԳԱՐ (ՄՈՀԱԼԻ) ՇՐՋԱՆ, ՓՈՒՆՋԱԲ-140507, ՀՆԴԿԱՍՏԱՆ «ՍՎԻՖԹԶԻԴԻՄ ՑԵՖՏԱԶԻԴԻՄ ԴԵՂԱՓՈՇԻ ՆԵՐԱՐԿՄԱՆ 1000ՄԳ; (1) ԱՊԱԿԵ ՍՐՎԱԿ», «ԱՏՍՎԻՖՏ 10 ԱՏՈՐՎԱՍՏԱՏԻՆ ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 10ՄԳ; (30/3Х10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԵՎ «ԱՏՍՎԻՖՏ 20 ԱՏՈՐՎԱՍՏԱՏԻՆ ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 20ՄԳ; (30/3Х10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննության 17.01.2024 թվականի N 01/331-24 բացասական եզրակացությունը՝ Հնդկաստանի «Ինդ-Սվիֆթ Լիմիտեդ, Պլոտ no11, Ինդաստրիալ Արեա, Կաթա-Բաթոլիկալան, Բադի, Սոլան-շրջան, Հ.Պ. 173205» ընկերության արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ինդ-Սվիֆթ Լիմիտեդ, Օֆֆ. ՆՀ-21, Ջավահարպուր գյուղ, Տեհսիլ Դերաբասի, ՍԱՍ Նագար (Մոհալի) շրջան, Փունջաբ-140507, Հնդկաստան «Սվիֆթզիդիմ ցեֆտազիդիմ դեղափոշի ներարկման 1000մգ; (1) ապակե սրվակ», «Ատսվիֆտ 10 ատորվաստատին դեղահատեր թաղանթապատ 10մգ; (30/3x10/) բլիստերում» և «Ատսվիֆտ 20 ատորվաստատին դեղահատեր թաղանթապատ 20մգ; (30/3x10/) բլիստերում» դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 21869 առ 16.01.2024թ., թիվ 21870 առ 16.01.2024թ. և թիվ 21871 առ 16.01.2024թ., բացասական եզրակացությունները, որի համաձայն լիարժեք փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը չեն ներկայացվել («Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մաս):

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Հնդկաստանի «Ինդ-Սվիֆթ Լիմիտեդ, Պլոտ no11, Ինդաստրիալ Արեա, Կաթա-Բաթոլիկալան, Բադի, Սոլան-շրջան, Հ.Պ. 173205» ընկերության արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ինդ-Սվիֆթ Լիմիտեդ, Օֆֆ. ՆՀ-21, Ջավահարպուր գյուղ, Տեհսիլ Դերաբասի, ՍԱՍ Նագար (Մոհալի) շրջան, Փունջաբ-140507, Հնդկաստան «Սվիֆթզիդիմ ցեֆտազիդիմ դեղափոշի ներարկման 1000մգ; (1) ապակե սրվակ», «Ատսվիֆտ 10 ատորվաստատին դեղահատեր թաղանթապատ 10մգ; (30/3x10/) բլիստերում» եվ «Ատսվիֆտ 20 ատորվաստատին դեղահատեր թաղանթապատ 20մգ; (30/3x10/) բլիստերում» դեղերի ընդհանուր հիմունքներով գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ